ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Ջերմուկ, Մյասնիկյան 8, Հեռ. (0287) 2-12-17, 060-74-70-77,
Ֆաքս 0287-2-12-02, 060-74-70-77

17 սեպտեմբերի 2024 թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ Գ. ԲԱԲԱՅԱՆԻՆ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՃԱՌՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ս/թ օգոստոսի 27-ին Ջերմուկ համայնքի համայնքապետարան է դիմել Ջերմուկ քաղաքի բնակիչ Գայանե Վահանի Բաբայանը՝ բացօթյա վաճառք կազմակերպելու թույտվության տեղական տուրքի արտոնություն ստանալու խնդրանքով՝ նշելով, որ ինքը համարվում է Ջերմուկ համայնքի ծայրահեղ անապահով բնակիչներից մեկը, չունի սեփական բնակտարածք, ապրում է վարձակալած բնակարանում, միակ եկամտի աղբյուրը մանրածախ բացօթյա առևտուրն է, որն իրեն բավարար եկամուտ չի ապահովում կենցաղային կարիքները հոգալու հետ մեկտեղ վճարելու նաև համայնքի ավագանու կողմից բացօթյա վաճառքի կազմակերպման համար տեղական տուրքը: Գ. Բաբայանը ՄՍԾ-ի Ջերմուկի տարածքային կենտրոնից տեղեկանք է ներկայացրել, որ իր ընտանիքի անապահովության միավորը կազմում է 27,19 և չի ստանում ընտանեկան (սոցիալական) նպաստ:

Դիմումում նշված բոլոր հանգամանքներով հանդերձ՝ տալիս եմ բացասական եզրակացություն Գ. Բաբայանին տեղական տուրքի արտոնություն սահանելու վերաբերյալ՝ նախադեպ չունենալու միակ տրամաբանությամբ, քանի որ վերջինիս հետ կողք-կողքի բացօթյա առևտուր են իրականացնում նույն կարգավիճակում գտնվող անձինք, և մեկին արտոնություն տալը կբերի անցանկալի հետևանքների: Ավագանուն կառաջարկեմ Գ. Բաբայանին աջակցել ֆինանսապես՝ բացոթյա առևտրի թույլտվություն ստանալու տեղական տուրքը վճարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ